ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№01/23786

«25» 04 2013 թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 18.04.2013թ. հ.200-ի 7 գրության հայտնում եմ հետևյալը.

<<Երևանի թիվ 1 շուկա>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 07.08.2007թ. հ.2289143 վկայականի համաձայն՝ <<Երևանի թիվ 1 շուկա>> ՍՊԸ-ն հանդիսանում է Երևանի Մաշտոցի պողոտայի հ.5 հասցեում գտնվող շուկայի սեփականատերը: Հիմք ընդունելով նշված վկայականը և <<Երևանի թիվ 1 շուկա>> ՍՊԸ տնօրենի սահմանված կարգով ներկայացված հայտը, Մաշտոցի պողոտա հ.5 հասցեում գտնվող փակ շուկայի վերակառուցման՝ ստորգետնյա հարկեր կառուցելու հիմքերի ուժեղացման և սեյսմազինվածության նպատակով կառուցապատողին ՀՀ օրենսդրության համապատասխան տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն:

Բարձրացված հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի ճարտարապետության հանձնաժողովի 22.03.2012թ. կայացած նիստում, որի արդյունքում՝ շուկայի շենքը փլուզումից փրկելու նպատակով, շինության տարածքում գոյություն ունեցող պատերի ամրացման և պահպանման հրատապությունից և անկանխատեսելի փլուզումից խուսափելու համար կառուցապատող «Երևանի թիվ 1 շուկա» ՍՊԸ-ին 30.03.2012թ. տրվել է հ.01/18-12259-173 շինարարության թույլտվություն: Շուկայի մասնակի վերակառուցման, պահպանված տարածքի վերականգնման և ուժեղացման նպատակով նախագիծ մշակելու համար կառուցապատողին 29.11.2012թ. տրվել է հ.01/18-07/2-55646-1101 ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Ինչ վերաբերում է փակ շուկայի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, ապա այն կարող եք ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից:

Կից ներկայացվում է <<Երևանի թիվ 1 շուկա>> ՍՊԸ-ին տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերի, փորձաքննության եզրակացության և ՀՀ մշակույթի նախարարության եզրակացության, պատճենները՝ բաղկացած <<11>> թերթից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Զ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատ.Ա.Ստեփանյան